

**ԴԵՆԴՐՈՊԱՐԿԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ  
ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Խալաթյան Ա.Ա.**

**ՀՀ ԲՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ, մ.Կոտայքի, հ. Ջրվեժ  
[khalatyan.artur@mail.ru](mailto:khalatyan.artur@mail.ru)**

Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների (ԲՀՊՏ) համակարգը ձևավորվել է 1958 թ-ին: Դենդրոպարկերը ձևավորվել են ԲՀՊ տարածքների ընդհանուր համակարգի ձևավորումից ավելի վաղ՝ 1930-ական թվականներին: Դրանք բուսական աշխարհի պահպանության օբյեկտներ են, որոնք ստեղծվում են արհեստական պայմաններում, բաց գրունտում, որտեղ իրականացվում են տեղական և ներմուծված ծառաթփային բույսերի կենդանի հավաքածուների պահպանություն և վերարտադրություն: Այս աշխատանքները իրականացվում են պետության կողմից լիազորված մարմնի հաստատած կանոնադրության համաձայն: Այստեղ բույսերը տեղաբաշխվում են կարգաբանական, աշխարհագրական, էկոլոգիական, դեկորատիվ և այլ հատկանիշներով: Դենդրոպարկը ունի գիտական, գիտաարտադրական և ուսումնական նշանակություն: Դենդրոպարկերում գիտական հետազոտություններ են կատարվում բույսերի ինտրոդուկցիայի, կլիմայավարժեցման և սելեկցիայի գծով: Հայաստանում ստեղծված դենդրոպարկերը հանդիսացել են գիտափորձկայաններ, որտեղ անցկացվել են տարբեր գիտաժողովներ: Քաղաքային և քաղաքամերձ գոտիներում դենդրոպարկերի հիմնումը կնպաստի բնակավայրերի և շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի առողջացմանը:

ՀՀ-ում գործող դենդրոպարկերը չորսն են՝ Ստեփանավանի «Սոճուտ», Վանաձորի «Սարուխանյանի Ժ.-ի անվան», Իջևանի «Դենդրոպարկ» և Բերդի «Սորաններ», որոնք գտնվում են ՀՀ ԲՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո:

Գործող դենդրոպարկերի հիմնումը կարելի է բաժանել երկու փուլի՝ I փուլը 1930 և II փուլը՝ 1960-ական թվականներին հիմնադրված: Առաջնաստեղծ դենդրոպարկերը ստեղծվել են Լոռու մարզում, դա բացատրվում է մի քանի հանգամանքով, որոնցից կարևորագույններն են. առաջին՝ անտառային ֆոնդի հողերի առկայությունը և բարենպաստ կլիմայական պայմանները, և երկրորդ Լոռու մարզի աշխարհագրական դիրքը, որը ավելի մոտ լինելով հարևան Վրաստանին, մասնավորապես՝ Թբիլիսիին, որտեղ բուսաբանությունը ավելի խոր արմատներ ուներ և մասնագետները հիմնականում կազմում էին տեղի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը: Հայաստանում առաջնաստեղծ են Վանաձորի և Ստեփանավանի դենդրոպարկերը:



Ստեփանավանի «Մոճուտ» դենդրոպարկը (նկ.1.) հիմնադրվել է 1933 թվականին, ազգությամբ լեհ ինժեներ-անտառագետ Էդմոնդ Լեոպոլդի Լեոնովիչի անձնական ծառափայլին բույսերի կենդանի հավաքածուի հիման վրա: Դենդրոպարկը գտնվում է Գյուլագարակ համայնքի հարևանությամբ և զբաղեցնում է 35 հա տարածք: Դենդրոպարկում աճում են շուրջ 485 ծառափայլին բույսեր և մազլցող լիաններ, պարտիզային ձևեր (<http://www.reservepark.mnp.am>):

Նկ. 1. «Մոճուտ» դենդրոպարկ

Վանաձորի «Վանաձոր» ներկայիս՝ «Մարուխանյան Ժ.-ի անվան» դենդրոպարկը հիմնադրվել է 1935 թվականին: Հարկ է նշել, որ այդ ժամանակահատվածում կողք-կողքի հիմնադրվել է նաև Վանաձորի բուսաբանական այգին: Դրանց հիմնադրման գործում մեծ ավանդ են ունեցել Գ.Դ.Յարոշենկոն, Պ.Դ.Յարոշենկոն, Լ.Բ.Մախատաձեն, Ա.Ա.Գրիգորյանը և Ռ.Ս.Աթաբեկյանը: Գործողների մեջ Վանաձորի դենդրոպարկն իր զբաղեցրած տարածքով ամենափոքրն է՝ 1,944 հա, բայց և այնպես չի զիջում իր ծառափայտեսակային բազմազանությամբ՝ մոտ 140 (Խալաթյան Ա.Ա., 2018):


Երկրորդ փուլով Տավուշի մարզում 1962 թվականին ստեղծվել են Իջևանի և Բերդի «Սորաններ» դենդրոպարկերը: «Սորաններ» դենդրոպարկը գտնվում է Բերդ քաղաքի հարավային բարձունքում, զբաղեցնում է 62,17 հա հողարածք, ծովի մակարդակից 1050-1090մ բարձրության վրա: Դենդրոպարկի հիմնադրման գործում մեծ ավանդ է ունեցել Հ.Ա. Ավագյանը, ով հանդիսանում է նաև «Ջրվեժ» անտառպարկի հիմնադիրը: «Սորաններ» դենդրոպարկի դենդրոֆլորան կազմված է շուրջ 110 ծառափայտեսակներից («ԱՊՀ» ծառափայտեսակների տեսակային կազմ, 2016):



Նկար 2. Իջևանի «Դենդրոպարկ»»

Իջևանի «Դենդրոպարկ»-ի (նկ. 2.) հիմնադիրներն են՝ Հայգիտանտառ փորձկայանը, ի դեմս տնօրեն, կենս. գիտ. թեկնածու Հ. Մ. Հախինյանը, անտառային տնտեսության ինժեներ Գ. Ի. Ադամյանը: Դենդրոպարկը ներկայումս աշխարհի այլ շրջաններից ներմուծված ծառերի և թփերի տեսակային կազմով հանրապետությունում ամենահարուստն է և գեղատեսիլներից մեկը (Մայադյան Մ.Լ., 2010):

Մեզ շրջապատող գրեթե բոլոր ծառաբույսերն էլ արտադրում են նյութեր՝ ֆիտոնցիդներ, որոնք կարճ ժամանակահատվածում երբեմն էլ մի քանի վայրկյանի ընթացքում, սպանում են օդում գտնվող մանրէները (Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Մ.Լ., 1985): Այս տեսակետից հատկապես արժեքավոր են փշատերև ծառաթփատեսակները, որոնք մեծ քանակությամբ ֆիտոնցիդներ են արձակում, և մանրէազերծման գործողությունը իրականացնում վայրկյանների ընթացքում: Այսպես օրինակ, պարզվել է, որ գիհու մեկ ծառը օրվա ընթացքում կարող է արտադրել 30գ ֆիտոնցիդ, գիհուտի 1 հա տարածությունից մթնոլորտ է արտանետվում 30կգ ֆիտոնցիդ: Դա բավական է, որ նրան հարող մի որոշակի տարածության վրա իսպառ ոչնչանան բոլոր մանրէները և օդը լրիվ վարակագրկվի, նույնը կարելի է ասել բոլոր ասեղնատերև ծառերի վերաբերյալ (սոճի, գիհի, եղևնի, եղևին): Բույսերի ֆիտոնցիդների դերը չի սահմանափակվում միայն դրանց սանիտարահիգիենիկ նշանակությամբ: Ապացուցված է, որ մի շարք բույսերի ֆիտոնցիդները ոչնչացնում են բույսերի տարբեր հիվանդությունների հարուցիչներին (Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Մ.Լ., 1987): «Արգելոցապարկայաին համալիր» ՊՈԱԿ-ի կողմից իրականացված դենդրոպարկերի ծառաթփատեսակների քանակական ցուցակների ստեղծման արդյունքում պարզվել է, որ գեղազարդային ասեղնատերևավոր՝ մշտադալար և տերևաթափ տեսակները, կազմում են ընդհանուր ծառաթփատեսակների շուրջ 45-50%-ը, ինչն էլ ավելի առաձնահատուկ է դարձնում դենդրոպարկերի էկոլոգիական նշանակությունը («ԱՊՀ» ՊՈԱԿ-ի ծառաթփատեսակների քանակական կազմ, 2016):



Նկ.3. ՀՀ գործող ղենդրոպարկեր

Դենդրոպարկերի հիմնման ժամանակ հաշվի են առնվել բնական բուրքադադրիչները՝ տեղադիրքը, լանդշաֆտը, կլիման, քամու վարդը, հողի կազմը: Դենդրոպարկերը գտնվում են անտառային գոտիներում, եզրափակելով նրանց (նկար 3.): Թռչնի թռիչքի բարձրությունից ակնհայտ սահմանագծվում է անտառների և ղենդրոպարկերի սահմանագիծը, պայմանավորված ծառաթփատեսակային առանձնահատկություններով:

Դենդրոպարկերը գտնվելով քաղաքային և մերձքաղաքային գոտիներում առանձնահատուկ և անգնահատելի արժեք են ներկայացնում էկոլոգիական վիճակի տեսանկյունից, և ի տարբերություն այգիների, զբոսայգիների, ղենդրոպարկերի առողջարանային ազդեցությունը քաղաքների օդի մաքրման, հարստացման, աղմուկ առաջացնող ձայների խլացման, շոգի մեղմման, միկրոկլիմայակարգավորիչ դերում մի քանի անգամ գերազանցում է վերոնշյալ բուսական աշխարհի պահպանության օբյեկտներին, ինչը պայմանավորված է հիմնականում ասեղնատերևավոր և մշտադալար ծառաթփատեսակների զգալի քանակությամբ՝ շուրջ 50%, և տարատեսակներով: Օրինակ Բերդի «Սորաններ» ղենդրոպարկը գտնվելով Բերդ քաղաքի հարավային բարձունքում մշտապես մաքուր օդ է մատակարարում քաղաքին, ինչը պայմանավորված է քաղաքի քամու վարդի վերլուծությամբ: Այստեղ ծովի մակարդակից ունեցած բարձրացմանը զուգընթաց ավելանում է մթնոլորտային տեղումների քանակը: Անկայուն եղանակի դեպքում, թե տաք և, թե ցուրտ ժամանակահատվածում, ամպրոպային անձրևներից առաջ, քամիները գերազանցապես փչում են հարավարևմտյան ուղղություններից:

Դենդրոպարկերի մշակույթի զարգացումը Հայաստանում շարունակվում է մինչ օրս, 2017 թվականից սկսած տարվում են աշխատանքներ ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի հարակից այգում

դենդրոպարկ հիմնելու կամ վերահիմնելու նպատակով (<http://www.mnp.am>): Կարելի է ենթադրել, որ դենդրոպարկերի ստեղծման նոր փուլի ականատեսն ենք դառնում մենք բոլորս:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խալաթյան Ա.Ա., Դենդրոպարկերի մշակույթի ձևավորումը Հայաստանում, ՀՀ ԲՆ «Բնություն» էլեկտրոնային շաբաթաթերթ, 39/2018.-էջ8:
2. ՀՀ ԲՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի 2017թ.-ի աշխատանքային գործունեության ամփոփ հաշվետվություն, 2017.-23էջ:
3. ՀՀ ԲՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո գտնվող դենդրոպարկերի և անտառապարկի ծառաթփատեսակների ամբողջական տեսակային կազմ, 2016. -52էջ:
4. ՀՀ ԲՆ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո գտնվող դենդրոպարկերի և անտառապարկի ծառաթփատեսակների ամբողջական քանակական կազմ, 2016. -15էջ:
5. Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ս.Լ., Հայաստանի դենդրոֆլորան, Երևան 1-ին մաս 1985.-440էջ:
6. Հարությունյան Լ.Վ., Հարությունյան Ս.Լ., Հայաստանի դենդրոֆլորան, Երևան, 2-րդ մաս 1987.-465էջ:
7. Սայադյան Ս.Լ., Բուսատեսակների հավաքածու (Իջևանի մերձարևադարձային դենդրոլոգիական պարկ (Ծառայգի) /գիտական աշխատություն/2010.-204էջ:
8. <http://www.mnp.am>
9. <http://www.reservepark.mnp.am>

### FOUNDATION OF THE DENDROPARKS, GEOGRAPHICAL DISTRIBUTION AND ECOLOGICAL IMPORTANCE IN THE REPUBLIC OF ARMENIA

#### Abstract

In article the creation of dendroparks, geographical distribution and ecological value in the Republic of Armenia is described. Creation of dendroparks has begun in the 1930th years in forest zones of Armenia. In dendroparks the quantity of ornamental and wood plants is about 45-50% which influence substantially promotes improvement of ecological state of environment. Creation of dendroparks in city and suburbs will promote improvement of an ecological condition of settlements and the environment.